

նեցել. կամ այսօր ընդունուած ձեռով եթէ արտայայտենք՝ երեք դիւանոր ուղղութիւն կամ օրիննտացիա է նա ունեցել — արեւմտեան, ուսուական եւ խառն, այսինքն՝ հայ-օտար ուղղութիւն:

Ժամանակի հնուութեամբ եւ տեղողութեամբ թերեւս ամենից հարուստը առաջինն է, արեւմտեան ուղղութիւնը, որ սկսուած է հէնց սկզբից եւ շարունակուած է մինչեւ Իսրայէլ Օրիի դործունէութեան առաջին շրջանը:

Նրա էութիւնն է — որ Հայաստանի ազատագրումը մահմեդական լծից նախ՝ հնարաւոր է, եւ երկրորդ՝ դա պիտի կատարուի Արեւմուտքի կամ Եւրոպայի միջոցով:

Դրա առաջին արտայայտութիւնը մենք տեսնում ենք Մեսրոպ Երէցին (Ժ. դարի մատենագիր) վերագրուած այն Տեսիլքի մէջ, որը պատմուած է Ներսէս Մեծի մասին:

Անշուշտ, այդ Տեսիլքը ո՛չ Մեսրոպ Երէցի գործն է, ո՛չ էլ որեւէ իրական կապ կարող է ունենալ Ներսէս Մեծի հետ: Նա յօրինուած է շատ ուշ ժամանակներում եւ վերագրուել է Մեսրոպ Երէցին, միեւնոյն ժամանակ կապուելով Ներսէս Պարթեւի անձնաւորութեան հետ:

Յամենայն դէպս, մեզ համար կարեւորը նրա պատմական կամ մատենագրական վաւերականութիւնը չէ, այլ այն, որ այդ Տեսիլքը հանդիսանում է հայ ժողովրդի քաղաքական ըզձերի արտայայտութիւնը:

Ըստ Տեսիլքի՝ Ներսէս Մեծը գուշակուած է, թէ հայերը պիտի կորցնեն իրենց ազատութիւնը եւ ենթարկուեն Արեւելքից եկած մի դաժան եւ անողորմ ժողովրդի: Բայց վերջը Արեւմուտքից պիտի դան քաջարի Հոռոմայեցիները կամ «Ֆրանկները»¹⁾, որոնք պիտի ազատեն Երուսաղէմը անհաւատների ձեռքից եւ վերականգնեն հայոց անկախութիւնը:

Եւ նա, հայ ժողովուրդը չսխալուեց իր ակընկալութիւնների մէջ: Արեւմուտքից եկած Սաչակիրների օգնութեամբ նա նորից ձեռք բերեց իր ազատութիւնը, թէեւ այս անգամ ո՛չ բուն Հայաստանում, այլ հեռուոր Կիլիկիայում:

1) Լէօ՝ «Հայոց հարցի վաւերա.» եր. 4, Իրազեկ, «Յակովբ Զուղայեցի»:

Սակայն դժբախտաբար, այդ անկախութիւնը նոյնպէս երկար չտեսեց. նա վերջ է վերջոյ խորտակուեց քրիստոնէութեան ու մահմեդականութեան բախումների մէջ: Բայց հայ ժողովրդի մէջ շարունակեց ապրել այն նուիրական յոյսը, թէ Հայաստանը անպայմանօրէն պիտի ազատուի եւ պիտի ազատուի Արեւմուտեան քրիստոնեաների ձեռքով:

Այդ աւանդութեան կամ աւելի ճիշդ՝ հայ ժողովրդի սպասելիքներին հաւատարիմ՝ մեր կեանքի ղեկավարները հետագայում բազմիցս փորձեցին փրկելու մեր երկիրը մահմեդականների լծից, միշտ ընթանալով միեւնոյն ուղիով, այն է՝ Արեւմտեան ազգերից օգնութիւն հայցելով:

Ճիշդ է, թէեւ արեւմտեան ազգերը երբեմն փոխուած են իբրեւ ղերակատարներ այս գործում. երբեմն Ֆրնասան է հանդէս դալիս հայերին ազատողի դերում, երբեմն Հոռոմը, երբեմն մէկ ուրիշ ազգութիւն կամ պետութիւն — բայց դիւանոր ղերակատարը միշտ Արեւմուտքն է, մանաւանդ պապական Հոռոմը:

Հայ ժողովուրդն ինքը միշտ երկրորդական, միայն նպաստողի դեր ունի իր ազատութեան գործում: Հարկաւոր պարէնը, դրամը, հարկաւոր մարդկային ոյժն անգամ նա կը տայ: Եթէ հարկաւոր է՝ մինչեւ իսկ կրօնական որոշ զիջողութիւններ էլ կ'անի — միայն թէ Արեւմուտքը դայ եւ ազատազրի իրեն:

2.

Սաչակրաց արշաւանքներից յետոյ՝ առ երեւոյթ շատ էր զօրացել Պապերի հեղինակութիւնը, մանաւանդ հեռուոր Արեւելքում: Առ երեւոյթ ենք ասում, որովհետեւ իրապէս Սաչակրաց արշաւանքները նպաստեցին պապականութեան անկմանը:

Արեւելքի ժողովուրդները, յանձին Սաչակիրների, տեսնում էին, թէ ինչպէս Պապերը մատի մէկ շարժումով հսկայական բազմութիւններ ոտքի էին հանում եւ ուղարկում դէպի Արեւելք — մեռնելու կրօնի համար եւ քրիստոնէութիւնը մահմեդականութեան հարուածներից փրկելու:

Նման մտածելակերպ ունենալով, հայերն էլ, ղեռ շատ վաղ ժամանակներից սկսած, առաւելապէս դէպի Հոռոմ էին դարձնում իրենց